ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ -18/8» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով իրականացվող գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք. Երևան 19 փետրվարի 2018թ. Ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Պետրոսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
7. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

2.1. ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար հայտարարված Անվտանգության (պահնորդական) ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Հասցե	Էլ. փոստի հասցե
1	«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 2-րդ փակ., 1-ին տուն, 2-րդ բն.	office@pantera.am
2	«ՍԻԼԵՐ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ա. Ահարոնյան 2/6	siler2002@gmail.com
3	«ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մարգարյան նրբ. 7, տարածք 23	gss@guardian.am
4	«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ	ՀՀ, ք.Երևան, Արաբկիր 49 փող., թիվ 1	law@armobil.am, info@armobil.am

3.Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

3.1 Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝ «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ, «ՍԻԼԵՐ» ՍՊԸ, «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ և «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ:

4.Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

4.1 «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ, «ՍԻԼԵՐ» ՍՊԸ, «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ և «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

5.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

5.1 «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ, «ՍԻԼԵՐ» ՍՊԸ, «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ և «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ մասնակիցները կազմել և ներկայացրել են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր:

6.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

6.1 Գնման առարկա է հանդիսանում ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար Անվտանգության (պահնորդական) ծառայության ձեռքբերումը, որը խմբավորված է 1 չափաբաժնում:

Պայմանագիրը կատարելու համար հրավերով սահմանված պայմաններին համապատասխան գնահատված մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Գնման առարկայի անվանում	Անվտանգության (պահնորդական) ծառայություն		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«ՍԻԼԵՐ» ՍՊԸ	5 832 000	-	5 832 000
2	«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	6 600 000	1 320 000	7 920 000
3	«ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ	7 800 000	1 560 000	9 360 000
4	«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ	8 400 000	1 680 000	10 080 000

Գնման ընթացակարգի մասնակիցների հայտով ներկայացված գնային առաջարկներում չկան թվերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանություններ:

7.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

7.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԻԼԵՐ» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

7.2 Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

7.3 Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

8.1 Հաստատել գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից եզրակացության ստացման հաջորդող օրը:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ _____ Հ. Արչունց

Գնահատող անդամներ (ԳԱ)՝ _____ Թ. Զաքարյան

_____ Ա. Հարությունյան

Բացող անդամներ (ԲԱ)՝ _____ Ա. Իսկանդարյան

_____ Հ. Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան